

Մեծ Բուլղար քաղաքի Ասավածածնի վերափոխման ուղևորական գմբեթավոր եկեղեցու (Церковь Успения) հարավային հիմնապատից վեր նորոգման ժամանակ իրրե շինաքար օգտագործված ապանաքարի ձախ եղրին՝ 5. տող (աջակողմյան մասը պատի մեջ է)։

419. ՅԱՐԿՍ ԱՅՍ ՈՒՆԵ.../

... ԱԿԱՆ ՄԱ... ՈՒ.../

ՆԻՆ ՓՈԽԵՑ.../

...ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒ.../

ՀԱԻՐՆ ԱԻԱՔ ՊԱՐ.../

Հռ. Զանփուլադյանը, հետեկող Մ. Բրոսսի վերծանությունը, առաջարկում է ընթերցել. ՅԱՐԿՍ ԱՅՍ ՈՒՆԵԼՈՎ ԶՊԱՏ/ԻԱԿԱՆ ՄԱՐ[ՄԻՆ] ՍԱՌ ԱՅ ԽԱԹՈՒ/ՆԻՆ.

ՓՈԽԵՑԱԻ Ի ՔՍ. ՈՎ ԿԱՐԴԷ/Ք ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԻ[Ի]Ն ԽՆԴՐԷՔ ԱՅ ՀԱԻՐՆ ԱՎԱՔ ՊԱՐ[ՈՆԻՆ]։ Ի Թ[ՎԻՆ] ԶՀ (1321)։

Հրատ. Հռ. Զանփուլադյան, 216, М. Броссе,
Об армянских надписях в Болгарах, с. 183.

420. Պրոֆ. Ն. Բերյոգինը այս արձանագրությունը ուղևորեն թարգմանել է հեռեյալ կերպ. "ГРОБЪ ЭТОТ ЗАКЛЮЧАЕТЪ ЧЕСТНОЕ ТѢЛО САРЫ, ГОСПОЖИ, КОТОРАЯ ПЕРЕШЛА КО ХРИСТУ. ВЫ, КОТОРЫЕ ЧИТАЕТЕ ЭТО, ПРОСИТЕ У ЕГО ПРОЩЕНИЯ ГРЕХОВЪ ЕЯ. ГОСПОДИНЪ АВАНЪ. ГОД 770".

Ծանոթ. Նույն կերպ 1819 թ. ընդօրինակել էր գնդապետ Պոտտը, որից օգտվել է Ա. Մ. Շպիլևսկին (տե՛ս С. Шпилевский, էջ 251)։

Հրատ. Н. Березин, Булгары на Волге,
Казань, 1853, с. 64-66, С. Шпилевский, с. 253.

Ըսա Իվ. Վասիլևի վերծանություն՝

ԱՅՍ ՀԱՆԳՍԱՐԱՆՍ ՅՈՎԱՆԻՍԻ ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆԻՆ. Թ[ՎԻՆ] ԾԾԵ ՈՒՄՆ ԳՐԱԾ Է։

Հռ. Զանփուլադյանի ընթերցմամբ՝

421. ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ /ՊԱՐՈՆ/ ՅՈՎԱՆԻՍԻՆ ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆԻՆ. Թ[ՎԻՆ] ԷՃԾԵ (1308)։

Ծանոթ. Արձանագրությունը թարգմանաբար հրաատարակել են Մ. Բրոսսեն, Աեն-Մարաները, Շպիլևսկին և այլք։ Մ. Բրոսսի կարծիքով՝ կասկածելի է թվագրությունը։

Հրատ. Հռ. Զանփուլադյան, 214, С. Шпилевский, с. 249.

ՏԵՏՅՈՒՐԻ ԳՅՈՒՂ

(Թաթարական Հանրապետության Կույրիշևի շրջան)

422. Տալանախար կրաքարից, օրորոցաձև, երկթեք մակերեսով՝ եռասարձան պատվանդանի վրա (ամրոցիկան մեկ քարաբեկորից կերաված)։ Այժմ գտնվում է Տեայուշիի մանկավարժական ուսումնարանի մուսաբի գիմաջ՝ պարանեզի մեջ։ Արձանագրությունը եղծված է քայքայված է. ուստի աալիս ենք ըսա նախորդ հրաատարակիչների վերծանություն.

[Թ]ՎԻՆ ԶԿԵ (1318). Ի ՏԱՐԱԺԱՄ ՀԱՍԱԿԻ ՅԱՆ[ԿԱՐ]ԾԱԿԻ ՎԱԽՃԱՆ[Ե]ՅԱԻ ԱՂԱԽԻՆՍ ԱՅ ՏՈՒՂԱՆ ՄԵԼԻՔՍ ԵԻ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՍ ԱՄ ՄԱԻՍ ԻՈՒ (21) ԹՈՂԼՈՎ ՄԵՋ ՍՈՒԳ ԱՆՄԻԹԱՐ

ԵՒ ՏՐԵՏԼՈՂՈՒԹԻՒՆ... ԵՏՈՒՐ ԳՐԵԼ (՞) ԶԱՅՍ. ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ... ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԻ... ԾՆՈՂԱՑ ՆՈՐԱ... ԳՐԻԳՈՐԻՆ: ՔՍ ԱՄ ԱՄԷՆ ԵՒ ԿԱՌՈՒՑՈՂԱՑ ՍՈՐԻՆ...¹

Ծանոթ. Արձանագրությունը հայտնաբերել է Ն. Ֆ. Կալինինի ղեկավարված հնագիտական արշավախումբը: Վերծանելու և թարգմանելու համար Ա. Պ. Սմիռնովը այն ուղարկել է ակադ. Հ. Ա. Օրբելուն, որը էստամպի հիման վրա կարգացել է:

«ЛЕТА 767 (1318). ПРЕЖДЕВРЕМЕННО СОПРИЧИСЛИЛАСЬ [КО ГОСПОДУ], ПРЕСТАВИВШИСЬ / РАБА БОЖИЯ ТУРГАН-МЕЛИК. И ПРЕСТАВИЛАСЬ ВОХРИСТЕ, / ОСТАВЛЯЯ НАМ СКОРБЬ НЕУТИШИМУЮ И ВЛАДИКА (СВЯЩЕННИК) МУТИ (ИЛИ МУРИ) ՀԱՄԱԿԱՅԻՆ ԿՈՂԻՆ՝ ДАЛ НАПИСАТЬ (?) ЭТО. ВЫ, КТО ПРОЧТЕТЕ, ОСТАВЛЕНИЕ ГРЕХОВ... РОДИТЕЛЕЙ ЕЕ... ГРИГОРИЮ. ХРИСТОС БОГ... АМИНЬ. И УСТРОИТЕЛИ СЕГО...»².

ՌԴ ԳԱ Թաթարական մասնաճյուղի Հնագիտության և ազգագրության սեկտորի 1949 թ. դաշտային աշխատանքների հաշվետվության մեջ կա «Կուլբիչևսկի Զատոն» վայրում հայտնաբերված այս տապանաքարի արձանագրության էստամպը, որը 1975 թ. հոկտեմբերի 20-ին մեզ արամազրեց աեզի Հեզվի ու գրականության ինստիտուտի Հնագիտության և ազգագրության սեկտորի վարիչ պրոֆ. Ա. Հ. Խալիկովը: Հայերեն ընագրի և ուսանողների թարգմանության համեմատությունը ցույց տվեց, որ անհաջող է կատարված էստամպը, որի հետևանքով «տրամուխիւն» բառի փոխարեն ընթերցվել է իրականում գոյություն չունեցող «Տէր Մուրի» կամ «Տէր Մուրի» անձնանունները:

Հո. Զանփուլադյանը իրավացի ուղղել է այդ սխալը:

Հրատ. Հո. Զանփուլադյան, 219-220,

А. П. Смирнов, с. 331.

Պրոֆ. Ա. Հ. Խալիկովը մեզ ցույց տվեց նաև մեկ այլ պատճենահանում, որի բնագիրը գտնվելիս է եղել «Գերմանական կուլտին» կոչված գերեզմանոցում: Դա մի բեկոր է, որ 1903 թ. լատիներեն և հայերեն զուգագրությանը վերծանել է Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Քերովը Պատկանյանը: Ահա այդ.

423. a ...աւ - աւս

anno ... Ամի

sex ...վեց

Дѣ ... ող[н]р...

424. Տապանաքար, որի արձանագրության ընագիրը հրատարակել են Մ. Բրոսսեն (1862 թ.) և Ա. Շպիլևսկին (1877 թ.): Մեջըրերում ենք Հո. Զանփուլադյանի վերծանությամբ.

ԱՅՍ ՀԱՆԴԻՍՍ [ԱՍՏՈՒԱԾԱ] / ՍԷՐ ՊԱՐ[ՈՂ]Ն ԱՎԱՔ / [ԻՆ] ՈՐԴՈՑ...

[ԱՄԻՐԱՏՆԱ] / ԱՐԴ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՄԵՂԱՑ / [Թ]ՈՂՈՒ[ԹԻՆ] ԽՆԴՐԵՑԷՔ. / ՅԱՍՏՈՒԾՈՑ.

ԱՄԷՆ: ԹՎԻՆ...

Ծանոթ. Հո. Զանփուլադյանի կարծիքով՝ արձանագրությունը փորագրվել է «1321 թ. հատ» (Հո. Զանփուլադյան, 216):

Հրատ. С. Шпилевский, 251,

М. Brosset, Note sur..., 20, Saint-Martin, նշվ. աշխ., էջ 505.

¹ А. П. Смирнов, Армянская колония, с. 331, Հո. Զանփուլադյան, էջ 219:

² Там же, Հմտ. Археологическая экспедиция КФАН за 1949 г. Село Кирельское. Камско-устыинского района. Армянское надгробие. Эстамп снял Константинов, фонд № 5, опись № 32, един. хранения № 23.

425. Տապանաքար, որի արձանագրությունը մեղ չի հասել և տրվում է Ն. Բերյոզինի ուսման թարգմանությամբ.

"ЭТА МОГИЛА ВЛОГОЧЕСТИВАГО И СОСТРАДАТЕЛЬНОГО БАРОНА ОШИНА, СЫНА АНДОНІОСА ОСЕФА-ВЫ, КОТОРЫЕ ЧИТАЕТЕ [CIE], ПОМОЛИТЕСЬ ОБЪ ОТПУЩЕНІИ ГРЕХОВ ЕГО. В 784 ГОДА "1.

1882 թ. Ա. Վիսոցկին հայկական եկեղեցու («Հունական պալատի») շուրջ հայանարերում է երկու արձանագրություններ, որոնք հրաաարակում է Բ. Պաականյանի ուսման թարգմանությամբ²: Դրանք են.

426. Տապանաքար՝ վրան 6 առդ.

ԱՅՍ ՀԱՆԳ/ԻՍ ՊԱՐՈՆ / ԵԱՂՈՒԲԻՆ [ՄԵ]Ղ[ԱՅ] ՔԱՒԻՈՒԹԻՒՆ / ԱԾ ՅԱՒՈՒՐ / ԴԱՏԱՍՏԱՆԻՆ:

Հրատ. Հո. Ջանիդադյան, 217:

427. Տապանաքար՝ վրան 3 առդ.

ԱՅՍ է ՀԱՆԳ/ԻՍ Յ[Ո]ՍԷՓԻ / Թ[ՎԻՆ] ԷՃԿԷ (1318):

Հրատ. Հո. Ջանիդադյան, 218:

428. Տապանաքար՝ վրան 5 առդ.

[ԱՅՍ ՀԱՆԳԻՍ] ՈՂ/ԻԱՆ ՊԱՐՈՆԻ. ՈՎ [ԿԱՐԴԱՅ]/Ք ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹ[ԻՒՆ] / ԽՆԴԻՆԵՔ [ՆՈՅԱ] / ԱՄԷՆ:

Ծանոթ. Հո. Ջանիդադյանի կարծիքով ՈՂԻԱՆ կարելի է ընթերցել նաև ՈՒՀԱՆ, իսկ ՆՈՅԱ վերականգնված բառի փոխարենը ՅԱՍՏՈՒԾՈՅ:

Հրատ. Հո. Ջանիդադյան, 219:

ԿԱԶԱՆ (ՂԱԶԱՆ)

Նկատելի գաղթախններից է եղել նաև Կաղան քաղաքը, որանդի հայերն ունեցել են իրենց եկեղեցին³ և հոգևոր հովիվը: Նրանք այսանդ ղանգվածարար հասաաակեցին 1431 թվականից հետո, երբ մոսկովյան իշխան Պյատրիի ղորքերը կործանեցին Մեծ Բուլղար քաղաքը⁴, և հայկական թաղամասը գազարեց գոյություն ունենալուց⁵:

Վկայություն է պահպանվել այն մասին, որ Կաղանի հայ աղգարնակչությունը օգնել է իվան Ահեղին՝ 1552 թ. համանուն խանությունը նվաճելու ժամանակ⁶: Քաղաքի Սուկոննայա արվարձանի աարածքում՝ այժմյան Կալինինի փողոցի վրա եղել են հայկական երկու փողոցներ՝ "Ближняя Армянская" և "Дальняя Армянская": Հայոց գերեզմանաաունը գանվելիս է եգել «3-րդ լեռան» լանջին:

19-րդ դարի վերջին Բարաուոյի կալվածքում հայանարերվել են հայագիր աապանա-

1 Н. Березин, Булгары на Волге, с. 64-66.

2 С. Высоцкий, Новая археологическая находка в селе Болгарах. "Известия общества археологов Казанского университета" (ИОАКУ), т. VII, с. 7-8.

3 Հո. Ջանիդադյան, Գշվ. աշխ., էջ 221:

4 А. П. Смирнов, Армянская колония..., с. 330-359.

5 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկովյում, էջ 13:

6 Նույլ աեղում,